

Տարեկան ամփոփում

2021 թվական




ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»
իրավապաշտպան հասարակական
կազմակերպությունը ներկայացնում է 2021 թվականի
գործունեության տարեկան հաշվետվությունը:



ԻՐԱԿԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



**Ձեռքս բռնիր, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...
ԻՆՁՆԻՑ ԵՐԵՍ ՄԻ՝ ԴԱՐՁՐՈՒ...**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվետվությունն ամփոփում է կազմակերպության իրականացրած ծրագրերը և դրանց արդյունքները, տարաբնույթ միջոցառումներին կազմակերպության մասնակցության, քրեակատարողական հիմնարկներում կատարած մշտադիտարկման և աշխատանքային խմբերում ներգրավվածության վերաբերյալ տեղեկատվություն:

Հաշվետվությունը կազմեցին՝

Նարե Հովհաննիսյանը

Կազմակերպության ծրագրերի ղեկավար

Կարինե Բալայանը

Կազմակերպության հաղորդակցության մասնագետ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2017 թվականին:

Կազմակերպության առաքելությունն է աջակցել այնպիսի իրավական պետության ձևավորմանը, որտեղ մարդը, նրա արժանապատվությունը, իրավունքները և ազատությունները ճանաչված են որպես բարձրագույն արժեքներ:

Կազմակերպության նպատակներն են.

- Նպաստել ժողովրդավարության ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը:
- Խթանել մարդու իրավունքների ապահովման, իրացման և պաշտպանության մեխանիզմների արդյունավետ իրականացումը:
- Աջակցել մարդու իրավունքների ոլորտում պետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ իրագործմանը՝ տեղական և միջազգային մակարդակով ջատագովելու միջոցով:
- Նպաստել օրենսդրության և դատաիրավական համակարգի կատարելագործմանը և զարգացմանը:


Կազմակերպության գործունեության առանցքում ազատագրված անձանց իրավունքների պաշտպանությունն է: Այդ ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնց շրջանակներում Կազմակերպությունն ուսումնասիրել է ազատագրված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները, նրանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացման խոչընդոտները, քրեակատարողական համակարգում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները, գենդերային զգայուն քաղաքականության ներդրման կարևորությունը, իրավախախտում կատարած կանանց և անչափահասների հիմնախնդիրները:



Հաշվետու տարում Կազմակերպությունն ընդլայնել է գործընկերային ցանցը և դրամաշնորհներ է ստացել Հայաստանում կանանց հիմնադրամի, Եվրասիա համագործակցության հիմնադրամի և Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի կողմից: Կազմակերպությունն ընդլայնել է նաև աշխատակազմը՝ ծրագրային գործողությունների իրականացման մեջ ներգրավելով հաղորդակցության և կայքի պատրաստման մասնագետների, լրագրողի, վարսահարդար և մատնահարդար դասընթացավարների, օպերատորների, լուսանկարչի, մոնտաժի մասնագետների, հարցազրուցավարների և հետազոտողների:

Հաշվետու տարում Կազմակերպության շահառուների թիվը հասել է 34-ի՝ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված 16 անձ (10 տղամարդ և 6 կին), 7 ցմահ դատապարտյալ, 1 կալանավորված տղամարդ, պրոբացիայի 9 շահառու (7 կին և 2 տղամարդ), 1 նախկին ցմահ դատապարտյալ: Բացի այս, մեկնարկվել է նախկինում ազատազրկված անձանց Կազմակերպությունում որպես անդամներ ներգրավելու գործընթացը:

Կազմակերպության բյուջեն հաշվետու տարում կազմել է 16,430,730 ՀՀ դրամ:





Պրոբացիայի կին շահառուների
հզորացում՝ հանուն կայուն ապագայի

2021թ., հունիս - օգոստոս



ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Պրոբացիայի կին շահառուների հզորացում՝ հանուն կայուն ապագայի

Կազմակերպությունը 2021 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է «Պրոբացիայի կին շահառուների հզորացում՝ հանուն կայուն ապագայի» ծրագիրը, որի նպատակն էր խթանել պրոբացիայի կին շահառուների տնտեսական կայունությունը:

Ծրագրի խնդիրներն էին.

- Չարգացնել պրոբացիայի կին շահառուների մասնագիտական հմտությունները,
- Բարելավել նրանց կյանքական բարեկեցությունը:

Ծրագրի հաստատումից հետո ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ վերջինս կհավաքագրի 2 դասընթացների մասնակիցներին, իսկ դասընթացները կիրականացվեն պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի շենքում: Այդ նպատակով հատկացվել է առանձին սենյակ:

Քանի որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը պրոբացիայի շահառուների համար իրականացնում էր վարդահարդարման դասընթաց, որոշվել է նոր խումբ չհավաքագրել և դասընթացին մասնակցելու հնարավորություն տալ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացի կին մասնակիցներին:

Վարսահարդարման դասընթացին մասնակցել է 3 կին, մատնահարդարման դասընթացին՝ 7 կին:




Վարսահարդարման դասընթացի մասնակիցները սովորել են «Վարսահարդարման արվեստի ծագում և զարգացում. տեսական», «Հաճախորդի հետ շփվելու և աշխատելու հիմունքներ. տեսական», «Մազերի խնամք», «Մազերի կտրում», «Մազերի հարդարում», «Մազերի գանգրացում և ուղղում», «Բարդ և հանդիսավոր սանրվածքների ձևավորում», «Կանացի պարզ սանրվածք», «Կտրվածք կառե», «Երեկոյան սանրվածք»:




Մատնահարդարման դասընթացի մասնակիցները սովորել են «Գործիքների հետ աշխատանք, ախտահանում», «Եղունգի ֆորմաներ խարտոցելու տեխնիկա», «Մատնահարդարման տեսակները. թաց մատնահարդարում», «Կոմբինացված և ապարատային մատնահարդարում», «Գելաք», «Գելաք հարթեցումով», «Գելաք ամրեցումով», «Պոլիգելով ամրեցում և եղունգի ազատ եզրի շտկում», «Գելաք՝ տեխնիկայի ամրապնդումով», «Գելային մոդելավորում և ֆորմաների ճիշտ տեղադրում»:

Նշված դասընթացներից բացի յուրաքանչյուր խմբի հետ կազմակերպվել է 1-ական հանդիպում հաջողության հասած կին ձեռներեցների հետ: Հանդիպումների նպատակն էր խրախուսել մասնակիցներին, որպեսզի իրենք էլ իմանան, որ ցանկություն և կամք ունենալու դեպքում կարող են հաջողության հասնել:

Վարսահարդարման դասընթացի մասնակիցների հետ հանդիպել է Անի Հակոբյանը, ով հիմնադրել է Ani's Handmade Books-ը և գրքերի տեսքով զարդեր ու այլ աքսեսուարներ է պատրաստում: Մատնահարդարման խմբի մասնակիցների հետ հանդիպել են Տոտիկ Հրաշագործ-Ձեռագործ դպրոցի հիմնադիրներ Սիլվանա Զոբանյանը և Մարիամ Ալեքսանյանը: Նրանք ներկայացրել են, թե ինչպես են իրագործել իրենց գաղափարները, ինչ դժվարություններ կամ խոչընդոտներ են եղել, ինչպես են դրանք հաղթահարել և այժմ ինչ հաջողություններ ունեն:





Մատնահարդարման և վարսահարդարման դասընթացների ավարտից հետո 2 խմբերի մասնակիցների համար համատեղ կազմակերպվել է «Գործարար հմտությունների զարգացում» եռօրյա դասընթաց հետևյալ թեմաներով՝ «Հաճախորդների սպասարկման տեխնիկա», «Ծախսեր և ինքնարժեք», «Շահութաբերության հաշվարկ», «Ժամանակի կառավարում» և «Գրանցումների և պատվերների կառավարում»:

Մասնակիցները սովորել են, թե որոնք են սպասարկման փուլերը, ծանոթացել են հաճախորդների տիպերին և առանձնահատկություններին, որպեսզի կարողանան բավարարել նրանց պահանջմունքները: Կարևոր էր սպասարկման առանձնահատկություններին ծանոթանալ՝ հնարավոր կոնֆլիկտները կառավարելու և դրանց ճիշտ լուծում տալու համար, որպեսզի կանխվի դժգոհությունը:

Նաև ծանոթացել են գործարար հմտությունների կարևոր սկզբունքներին՝ ծախսերի պլանավորում և գնահատում, ինքնարժեքի հաշվարկ: Սովորել են, թե ինչպես պետք է կատարել շահութաբերության և ինքնաձախսաձածկման կետի հաշվարկները: Բացի այդ, սովորել են, թե ինչպես պետք է ճիշտ կառավարել ժամանակը, կատարել գրանցումներ, օգտագործել միասնական օրացույց և ստեղծել հետադարձ կապ, ծանոթացել են կառավարման մեթոդներին, գործիքներին և մոդուլներին:

Ծրագրի ավարտին մասնակիցները ստացել են մասնակցության վկայականներ, մատնահարդարման և վարսահարդարման պարագաներ: Կազմակերպությունը շնորհակալագրեր է հանձնել Պրոբացիայի ծառայությանը՝ ծրագրի շրջանակներում Կազմակերպության հետ արդյունավետ ձևով համագործակցելու և ծրագրի իրականացմանն աջակցելու համար, իսկ դասընթացավարներին՝ Կազմակերպության հետ համագործակցելու և դասընթացները վարելու համար:



Ծրագրի իրականացման ընթացքում Կազմակերպությունը պատրաստել է [տեսանյութեր](#), որտեղ ներկայացրել է մասնակիցների աշխատանքների ընթացքը և արդյունքները: Ծրագրի իրականացման ընթացքը լուսաբանվել է ֆեյսբուքյան գրառումների և նկարների միջոցով: Այդ նպատակով պատրաստվել է մոտ 30 վիդեոալ: Տեսանյութերը և վիդեոալները տեղադրվել են Կազմակերպության սոցիալական մեդիայի էջերում:

Ծրագրի կայունությունը և շարունակականությունն ապահովելու նպատակով Կազմակերպությունը մատնահարդարման համար անհրաժեշտ աշխատանքային գործիքներ է տրամադրել Պրոբացիայի ծառայությանը, որպեսզի վերջինս իր կանոնադրական նպատակների շրջանակներում շահառուների համար մատնահարդարման դասընթացներ իրականացնի:



ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն

Դասընթացների մասնակից բոլոր կանայք ծրագրի ավարտից հետո զբաղվում են մատնահարդարմամբ և վարսահարդարմամբ: Մատնահարդարման խմբի բոլոր կանայք վճարովի ծառայություններ են մատուցում: Նրանցից երկուսը պատրաստվում են գեղեցկության սրահ բացել: Վարսահարդարման խմբի մասնակիցներից մեկը տանն է աշխատում, նպատակ ունի գեղեցկության սրահ բացել: Կանանցից մեկը ևս սկսել է աշխատել: Մտերիմ մարդկանց և հարևանների մազերն է կտրում և հարդարում: Մյուս կինը տրված գործիքներն օգտագործում է իր և իր ընտանիքի անդամների մազերի խնամքի և հարդարման համար:

Վարսահարդարման խմբի մասնակիցներից մեկը ծրագրի մասին [հարցազրույց](#) է տվել Հանրային ռադիոյին, ինչպես նաև Կազմակերպության ուղղորդմամբ մասնակցել է Հայաստանում կանանց հիմնադրամի կազմակերպած քիզնեսի մոդելավորման երկօրյա դասընթացին:



...

**Մարդիկ՝ ճաղերից այն կողմ.
ամրապնդելով ազատագրկված անձանց
և հասարակության միջև կապը**

2021թ. հունիս - 2022թ. հունվար

PRAGUE
CIVIL
SOCIETY
CENTRE



ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Ծրագրի խնդիրներն են.

- Մշակել հաղորդակցության պլան,
- Ստեղծել մեդիա հարթակ, որտեղ կներկայացվեն ազատագրկված անձանց հիմնախնդիրները հանրայնացնող տեսաֆիլմեր, ֆոտոպատմություններ և հոդվածներ:

Հաղորդակցության պլան

Կազմակերպությունը մշակել է հաղորդակցության պլան, որը բաղկացած է 2 մասից՝ ներքին և արտաքին: Ներքին հաղորդակցության պլանն օգնել է կանոնակարգել Կազմակերպության փաստաթղթաշրջանառությունը և մշակել ինստիտուցիոնալ հիշողության պահպանման գործիքակազմ:

**Մարդիկ՝ ճաղերից այն կողմ. ամրապնդելով
ազատագրկված անձանց և հասարակության միջև
հաղորդակցությունը**

Կազմակերպությունը 2021 թվականի հունիսից Պրահայի բաղաբացիական հասարակության կենտրոնի աջակցությամբ իրականացնում է «Մարդիկ ճաղերից այն կողմ. ամրապնդելով ազատագրկված անձանց և հասարակության միջև հաղորդակցությունը» ծրագիրը, որի նպատակն է խթանել ազատագրկված անձանց, նրանց ընտանիքների և հասարակության միջև հաղորդակցությունը մեդիա հարթակի ստեղծման միջոցով:

Արտաքին հաղորդակցությունը մշակելիս Կազմակերպությունը նպատակ է ունեցել իր գործունեության մասին ընդհանուր ընկալում ստեղծել, շահագրգիռ անձանց ու կառույցներին մոտիվացնել և նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել իր գործունեության նկատմամբ:


Հաշվետու տարում արտաքին հաղորդակցության խնդիրներն էին՝ դառնալ ճանաչելի, ազդեցություն ունենալ, փոփոխություն բերել մարդկանց մտածելակերպում, փոխել նրանց վերաբերմունքն ազատագրկված կամ իրավախախտում կատարած անձանց նկատմամբ և մարդկանց այնպես մոտիվացնել, որ Կազմակերպության հետ միասին բարձրացնեն հարցեր ու խնդիրներ և համատեղ ուժերով հասնեն դրանց լուծմանը:

Կազմակերպությունը հաշվետու տարում մշակել և կիրառել է արտաքին հաղորդակցության հետևյալ գործիքները՝ ինտերնետային կայք, սոցիալական ցանցեր, Կազմակերպության մասին տեքստային և այլ նյութեր, հանրային միջոցառումներ, փակ հանդիպումներ, լրատվամիջոցների հետ կապեր:

Առանձնացվել են Կազմակերպության լսարանի հետևյալ թիրախ խմբերը՝ պետական կառույցներ, հանրություն/հասարակություն, զանգվածային լրատվության միջոցներ, ազատագրկված անձինք, պրոբացիայի շահառուներ, քաղաքացիական հասարակության կառույցներ, միջազգային կազմակերպություններ: Նշված թիրախ խմբերից յուրաքանչյուրի համար որոշվել են հաղորդակցության նպատակը և ուղերձները, ընտրվել են հաղորդակցման հարթակները, մեթոդներն ու գործիքները:

Բացի այս, ընտրվել է արտաքին հաղորդակցության պարբերականությունը, սահմանվել են հաղորդակցության արդյունավետությունը չափելու ցուցիչները և հետադարձ կապի միջոցները, արտակարգ իրավիճակներում հաղորդակցության մարտահրավերները և ձևերը, մշակվել է հաղորդակցության գործողությունների կարճաժամկետ պլան:

Արտաքին հաղորդակցության արդյունքները ներկայացված են հաշվետվության հաջորդ բաժիններում:



Մեդիա հարթակ

2021 թվականի դեկտեմբերից գործում է www.prisoninitiatives.am կայքը, որն ունի բարձր դիտելիություն:

Այն տեղեկատվություն է պարունակում Կազմակերպության պատմության, գործընկերների, աջակիցների, ընթացիկ և ավարտված ծրագրերի մասին:

Ունի նորությունների, հայտարարությունների, Կազմակերպության իրականացրած հետազոտությունների, գործընկերների պատրաստած զեկույցների և այլ ռեսուրսների բաժիններ, ինչպես նաև հետադարձ կապի և նվիրատվություն կատարելու հնարավորություն:

Ազատագրված անձանց խնդիրները հանրայացնող տեսաֆիլմերը, ֆոտոշարքերը և հոդվածաշարը ներկայացված են կայքի Մեդիադարան բաժնում:

Սոցիալական ցանցեր

Սոցիալական ցանցերի էջերը Կազմակերպությանը հնարավորություն են տվել օպերատիվ կերպով տեղեկատվություն հաղորդել և արագ հետադարձ կապ ստանալ իր շահառուներից ու գործընկերներից, քննարկել ոլորտային հարցեր, մասնակցել տարբեր խմբային քննարկումների, կապ հաստատել թիրախ խմբերի հետ:

Հաշվետու տարում Կազմակերպությունն առավել ակտիվ ներկայացված է եղել [Ֆեյսբուքում](#) և [Յություբում](#):


Ֆեյսբուքի էջի հավանումների թիվը հաշվետու տարում 980-ից հասել է 1270-ի: Էջն ունեցել է 3,189,000 տեսանելիություն, որից 635,000-ը՝ օրգանիկ, 2,554,000-ը՝ ոչ օրգանիկ (գովազդ): Գովազդի համար ծախսվել է 261,4 ԱՄՆ դոլլար:

Էջն ամենաշատը դիտել են Հայաստանում՝ 88,3 %, այնուհետև՝ Ռուսաստանում՝ 2,7 %, ԱՄՆ-ում՝ 2,5 %, Ադրբեջանում՝ 1,6 %, Ուկրաինայում՝ 0,5 %, Գերմանիայում՝ 0,4 %, Վրաստանում՝ 0,3%, Լեհաստանում՝ 0,3%, Չինաստանում՝ 0,2%, Նիդեռլանդներում՝ 0,2%:


Կազմակերպության [Թվիթերի](#) և [Տելեգրամի](#) ալիքները 2021 թվականին են ստեղծվել, ուստի համեմատաբար պասիվ են և դեռևս զարգանալու կարիք ունեն:




Կազմակերպության Ֆեյսբուքի էջի լսարանը՝ ըստ տարիքի և սեռի, ունի հետևյալ վիճակագրությունը.



Կազմակերպության Յուրօրէի ալիքի բաժանորդագրութիւնների թիվն ավելացել է 400-ով՝ 27-ից հասնելով 427-ի:
Հաշվետու տարում այն ունեցել է 62,600 դիտում: Ալիքն ամենաշատը դիտել են հետևյալ երկրներում.



Կազմակերպության Յուրօրի ալիքի լսարանը՝ ըստ տարիքի և սեռի, ունի հետևյալ վիճակագրությունը.





Տեսաֆիլմեր և հոդվածաշար

Հաշվետու տարում Կազմակերպությունը նկարահանել է «Մարդիկ՝ ճաղերից այն կողմ» խորագիրը կրող 14 տեսաֆիլմ, որոնց մասնակցություն են ունեցել «Աբովյան», «Արմավիր», «Գորիս», «Հրազդան» և «Սևան» ԶԿՀ-ներում պատիժ կրող 9 դատապարտյալ, արորացիայի 1 շահառու և 1 նախկին ցմահ

դատապարտյալ: Տեսաֆիլմերը տեղադրվել են Կազմակերպության [կայքում](#) և սոցիալական հարթակներում՝ [Ֆեյսբուք](#), [ՅուԹյուբ](#):

Հաշվետու տարում Կազմակերպությունը մեկնարկել է [«Նամակներ քանտից»](#) հոդվածաշարը: Ազատագրված անձինք ուղարկել են 23 հոդված: Ազատագրված անձինք ուղարկել են 23 հոդված: Ամենաշատ հոդվածները գրել և ուղարկել են ազատագրված կանայք՝ 13 հատ, որոնցից կայքում տեղադրվել են 5-ը, քանի որ դրանք են համապատասխանել ներկայացված չափանիշներին և արժանացել խմբագրակազմի հավանությանը: Մնացած 10 հոդվածներն ուղարկել են «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց», «Հրազդան», «Նուբարաշեն» և «Վանաձոր» ԶԿՀ-ներում պատիժ կրող անձինք: «Արմավիր» ԶԿՀ-ից ուղարկել են 6 հոդված, որից 5-ը գրել են ցմահ դատապարտյալները: «Դատապարտյալների հիվանդանոց», «Հրազդան», «Նուբարաշեն» և «Վանաձոր» ԶԿՀ-ներից ուղարկել են 1-ական հոդվածներ: Հոդվածները տեղադրվել են Կազմակերպության [կայքում](#) և տարածվել ֆեյսբուքի էջում:

Ծրագրին ընդհանուր առմամբ մասնակցել են որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված 14 անձ, որից 6-ը՝ կանայք, 5 ցմահ դատապարտյալ, 1 կալանավորված տղամարդ, պրոբացիայի 2 շահառու, որից մեկը դատապարտված է եղել ցմահ ազատազրկման, և 1 նախկին ցմահ դատապարտյալ: Կազմակերպությունը կարողացել է կապ հաստատել ցմահ դատապարտյալներից մեկի ընտանիքի հետ և տեսաֆիլմ նկարահանել նրա որդու մասնակցությամբ:

Տեսաֆիլմերի և հոդվածների շնորհիվ անազատության մեջ գտնվող անձինք հնարավորություն են ունեցել բարձրաձայնել իրենց մտահոգությունները, ներկայացնել անձնական պատմությունները, ազատությունից զրկվելու հետևանքները, բանտային կյանքի դժվարությունները և այնտեղ անցկացրած տարիների փորձառությունը:

Ծրագրին մասնակցություն ունեցած բոլոր ազատազրկված անձինք և պրոբացիայի շահառուներն արժանացել են շնորհակալագրերի, իսկ հոդված ներկայացրած անձինք նաև հոնորարներ են ստացել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդված ներկայացրած ազատազրկված անձանցից երկուսը բարձրագույն կրթություն են ստանում, Կազմակերպությունը հոնորարները փոխանցել է համալսարանին՝ որպես նրանց 2021 թվականի 1-ին կիսամյակի 1 ամսվա ուսման վարձ:

Քանի որ կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումների պատճառով Կազմակերպության ներկայացուցիչները չէին կարող այցելել քրեակատարողական հիմնարկներ, շնորհակալագրերը քրեակատարողական ծառայության օգնությամբ փոխանցվել են հիմնարկներին, որտեղ կազմակերպվել են միջոցառումներ, և շնորհակալագրերը պաշտոնապես հանձնվել են ազատազրկված անձանց: Ուշագրավ է, որ քրեակատարողական ծառայությունը լուսաբանել է միջոցառումները և այդ մասին [հրապարակում](#) տեղադրել իր կայքէջում:

Կազմակերպությունը պատրաստվում է ազատազրկված անձանց՝ տեսաֆիլմերում և հոդվածներում առաջ քաշած խնդիրները և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությանը և քրեակատարողական ծառայությանը:



Հետադարձ կապ. Կարծիքներ տեսաֆիլմերի և հոդվածների մասին

Տեսաֆիլմերի և հոդվածների վերաբերյալ Կազմակերպությունը ստացել է միայն դրական կարծիքներ, որոնց բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդիրները ճիշտ մոտեցմամբ են հանրայնացվել:



Այս տեսանյութերի դերը մեծ էր, քանի որ կոտրեցին տարբեր կարծրատիպեր ազատագրկված անձանց մասին: Կարծում եմ՝ հասարակությունը պետք է տեղեկացված լինի, երբեմն նայի նման տեսանյութեր, որպեսզի փոխի իր վերաբերմունքը նման անձանց նկատմամբ և օգնության ձեռք մեկնի:



Երբ նայեցի ֆիլմերը, մի շարք մտքեր առաջացան: Դրսում՝ ազատության մեջ, ովքեր և ինչպե՞ս են հիշում դատապարտյալներին: Տասը կամ ավել տարիներ բանտարկության մեջ լինելուց հետո մարդ ինչպե՞ս կարող է վերադառնալ այն հասարակություն, որտեղ իրեն չեն հիշում: Բանտարկությունից հետո մարդն իրեն ազատության մեջ է ապահով զգում, թե՛ բանտում, որտեղ կյանքը կանոնակարգված է և վերահսկվում է: Մերժելով ու մեկուսացնելով դատապարտյալներին՝ մենք օգնում, թե՛ վնաս ենք տալիս հասարակությանը: Չե՞ որ մարդն իր կատարած արարքի համար արդեն պատժվել է: Այս հարցերը կարող են սպառնիչ պատասխան չունենալ: Բայց մենք կարող ենք վերանայել մեր վերաբերմունքը դատապարտյալների նկատմամբ:



Տեսաֆիլմերը դիտելուց հետո կարծիքս ոչ թե փոխվել, այլ ամրապնդվել է, քանի որ միշտ կարծել եմ, որ մարդն ամենուր մտնում է ՄԱՐԴ: Հիմնական զգացողությունը, որ առաջացել է դիտման ընթացքում, ապրումակցումն է: Կարծում եմ՝ հասարակությունը պետք է քարկոծելով փոխարեն օգնության ձեռք մեկնի նման անձանց, որպեսզի նրանք կարողանան վերաիմաստավորել իրենց կյանքը և նորովի սկսել այն, իսկ ազատություն ստանալուց հետո էլ ոչ թե բախվեն նոր խնդիրների, այլ՝ ջերմության, որպեսզի գեր մի փոքր հալչի նրանց հոգու սառույցը, որ կերտվել է դաժան օրերի ընթացքում:

Ուղերձներ


Թիրախ լսարանի հետ հաղորդակցման համար Կազմակերպությունը մշակել է հետևյալ ուղերձները.

- Ես ձեզնից մեկն եմ:
- Երբեմնի բանտարկյալ, բայց մարդ՝ ընդմիշտ:
- Դատապարտիր արարքը, ոչ թե մարդուն:
- Փոխիր վերաբերմունքդ, փոխիր կյանքեր:

Յեշթեգեր

Կազմակերպությունը նաև ստեղծել է հեշթեգեր, որոնց օգնությամբ խմբավորել է նմանատիպ գրառումները, որպեսզի սոցիալական ցանցերի հետևորդները կարողանան հեշտությամբ գտնել տվյալ գրառմանը թեմայով մոտ այլ գրառումներ:

- #նամակներ_բանտից
- #բանտային_պատմություններ
- #փոխիր_վերաբերմունքդ_փոխիր_կյանքեր
- #կյանքը_ճաղերից_այն_կողմ
- #կյանք_ճաղերից_ներս
- #մարդիկ_ճաղերից_այն_կողմ
- #մարդ_ընդմիշտ
- #պրոբացիայի_կին_շահառուներ
- #մատնահարդարման_դասընթացներ
- #վարսահարդարման_դասընթացներ
- #բիզնես_դասընթացներ
- #կայուն_եկամուտ #կայուն_ապագա
- #նոր_մասնագիտություն #նոր_կյանք
- #հմուտ_ձեռքեր #հրաշալի_արդյունք



Ֆիշարժան օրեր

Քրեակատարողական համակարգի խնդիրները հանրային օրակարգում և հասարակության ուշադրության կենտրոնում պահելու նպատակով տարբեր հիշարժան օրերի խորհուրդը Կազմակերպությունը կապել է ոլորտի կոնկրետ խնդրի հետ՝ հղելով շնորհավորական ուղերձներ կամ պետությանը կոչ անելով քայլեր ձեռնարկել այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Սեպտեմբերի 1



Իրավական նախաձեռնությունների կենտրոնը շնորհավորում է բոլոր ազատագրված անչափահասներին Գիտելիքի օրվա կապակցությամբ:

Թող տարին խաղաղ լինի, և բոլոր երեխաները կարողանան ստանալ իրենց հասանելի որակյալ կրթությունը՝ անկախ նրանից, թե ճաղերի որ կողմում են: Շնորհավոր սեպտեմբերի 1...



Գրադարանավարի օր

Շնորհավոր գրադարանավարի օր

Շնորհավորում ենք գրադարանավարի օրվա կապակցությամբ և հատուկ շնորհակալություն հայտնում քրեակատարողական հիմնարկների գրադարանավարներին:

Ազատագրված անձանց համար գրականության, գրադարանի և ընթերցասրահների հասանելիությունն ապահովելը կարևոր նշանակություն ունի նրանց կրթության, զբաղվածության և արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի իրացման տեսանկյունից:

Ուսանողների միջազգային օր



Այսօր ուսանողների միջազգային օրն է, ուստի շնորհավորում ենք բոլոր դատապարտյալ ուսանողներին և մաղթում հաջողություններ գիտելիքի ասպարեզում:


Կրթությունը շատ կարևոր է դատապարտյալների համար և կօգնի նրանց հետագայում գտնել իրենց տեղը կյանքում:

Նարնջագույն դարձրու աշխարհը. վերացրու կանանց նկատմամբ բռնությունը հիմա



Նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը աշխարհում 16 օր ակտիվորեն պայքարում են գենդերային բռնության դեմ: Համաշխարհային ակտիվիզմի 16-օրյակի այս տարվա թեման է՝ «Նարնջագույն դարձրու աշխարհը. վերացրու կանանց նկատմամբ բռնությունը հիմա»:

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ևս միանում է արշավին՝ կարևորելով բանտերում կանանց նկատմամբ գենդերային բռնության կանխարգելումը:



ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օր

Ամեն տարի դեկտեմբերի 1-ին աշխարհը հիշատակում է որպես ՁԻԱՅ-ի համաշխարհային օրը: Մարդիկ ամբողջ աշխարհում միավորում են իրենց ուժերը՝ ցույց տալու համար իրենց աջակցությունը ՄԻԱՎ-ով ապրող ու ՄԻԱՎ-ից տուժած անձանց և հիշելու համար բոլոր նրանց, ովքեր կորցրել են իրենց կյանքը ՁԻԱՅ-ի պատճառով:

ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա 2021 թվականի կարգախոսն էր՝ «Վերջ դնենք ՁԻԱՅ-ին, վերջ դնենք անհավասարություններին, վերջ դնենք համավարակներին»:


Կարևորելով ազատագրկված անձանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելումը՝ «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ևս միանում է օրվա կարգախոսին և կոչ անում կառավարությանը բարձրացնել ՄԻԱՎ ծառայությունների որակն ու հասանելիությունն բանտերում:

Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր

Դեկտեմբերի 3-ը հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրն է, որի խորհուրդը հաշմանդամության խնդիրները Երկիր մոլորակի բնակիչներին մեկ անգամ ևս ներկայացնելը և այդ խնդիրների լուծման հարցում բոլորի մասնակցությունն ակնկալելն է:

Այն խնդիրները, որոնց հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են ազատության պայմաններում, բազմապատկվում են քրեակատարողական հիմնարկներում, քանի որ նրանք բանտերում ապահովված չեն իրենց կարիքներին համապատասխան կենսապայմաններով, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն նրանց առողջության, այլև վերասոցիալականացման և վերաինտեգրման վրա:

Հատուկ մոտեցումների բացակայությանը հաշմանդամություն ունեցող անձինք առնչվում են քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս, քանի որ հիմնարկի ներքին կանոնակարգի կամ ազատազրկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկությունը մշակված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով, օրինակ՝ բրայլյան գրերով, մեծ տառաչափով կամ ձայնագրված տարբերակով:



Համապատասխան հարմարեցումները բացակայում են նաև ազատագրված անձանց ամենօրյա գործողությունների համար կարևոր տարածքներում, օրինակ՝ լոգարաններ, սանհանգույց, ճաշարան, երկարատև կամ կարճատև տեսակցության սենյակներ, զբոսահրապարակներ, գրադարաններ, մարզասրահներ, ուսումնական սենյակներ և այլն:

Հիմնարկների գրադարաններում հասանելի չեն այլընտրանքային ձևաչափերով գրքեր, օրինակ՝ բրալլան գրքեր, աուդիոգրքեր, ժեստերի լեզվով թարգմանված տեսանյութեր և այլն: Զի գործում նաև գրադարանից գրքերի սպասարկման հատուկ մշակված ընթացակարգ այն անձանց համար, ովքեր հաշմանդամությամբ պայմանավորված՝ ի վիճակի չեն այցելել գրադարան:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի չեն զբաղվածությունը ապահովող միջոցառումները: Նրանք ազատագրված ընթացքում չեն ապահովվում աշխատանքով, չեն կարողանում մասնակցել մասնագիտական ուսուցման դասընթացների կամ այլ միջոցառումների:

Ավելին, առկա չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան վերասոցիալականացման ծրագրեր, ինչի հետևանքով նրանք անբարենպաստ պայմաններում են հայտնվում, օրինակ, պայմանական վաղաժամկետ ազատվելիս: Ըստ պայմանական վաղաժամկետ ազատման գործող ընթացակարգի՝ այն անձինք, ովքեր պատժի կրման ընթացքում չեն աշխատել հաշմանդամություն ունենալու պատճառով, ստանում են 2 միավոր այն դեպքում, երբ տվյալ չափորոշիչի գնահատման համար սահմանված առավելագույն միավորը 3-ն է:

Խնդրահարույց է այն, որ մինչ օրս հաշմանդամություն ունեցող ազատագրված անձանց կարիքների ուսումնասիրություն չի իրականացվել: Առկա չեն ազատվելուց հետո հաշմանդամություն ունեցող անձանց վերաինտեգրման կարիքներին համապատասխան զբաղվածության և այլ ծրագրեր:

Ուստի անհրաժեշտ է մշակել և կիրառել հաշմանդամություն ունեցող ազատագրված անձանց աջակցություն ցուցաբերելուն, աշխատանքով և կացարանով ապահովելուն, կրթության մեջ ներգրավելուն ուղղված հատուկ մոտեցումներ, ինչպես նաև պրոբացիայի ծառայության, զբաղվածության կենտրոնների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության քայլեր նախաձեռնել, ինչը կնպաստի նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը և հասարակության մեջ վերաինտեգրմանը:

...

Նպաստելով ազատագրկված անձանց կրթության իրավունքի արդյունավետ իրացմանը

2021թ. հունիս – 2022թ. հունվար



EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION



ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Նպաստելով ազատագրկված անձանց կրթության իրավունքի արդյունավետ իրացմանը

Կազմակերպությունը 2021 թվականի հունիսից մեկնարկել է «Նպաստելով ազատագրկված անձանց կրթության իրավունքի արդյունավետ իրացմանը» դրամաշնորհային ծրագիրը:

Այն իրականացվում է Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում:

Ծրագրի նպատակն է խթանել ազատագրկված անձանց կրթության իրավունքի իրացման հարցում պետության ստանձնած պարտավորությունների և որդեգրած սկզբունքների պատշաճ կատարումը:

Ծրագրի խնդիրներն են.

- Ուսումնասիրել ազատագրկված անձանց կրթության իրավունքի իրացման օրենսդրական ու պրակտիկ խոչընդոտները և դրանց ազդեցությունն անհատական մակարդակում, մշակել իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ:
- Իրականացնել բացահայտված հիմնախնդիրների լուծմանն ուղղված ջատագովություն:
- Բացահայտված հիմնախնդիրների շուրջ իրականացնել հանրային իրազեկում:

«Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ». հետազոտության մեկնարկ

Ծրագրի շրջանակներում Կազմակերպությունն իրականացնում է «Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայով հետազոտություն: Հետազոտական աշխատանքները մեկնարկվել են 2021 թվականի հուլիսից և կամփոփվեն 2022 թվականի տարեսկզբին:

Հաշվետու տարում Կազմակերպությունն այս ուղղությամբ կատարել է փաստաթղթերի որակական վերլուծություն, ազատագրված անձանց կրթության իրավունքի ապահովման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով պատասխանատու կառույցներին ուղարկել է գրավոր հարցումներ, հիմնախնդրի վերաբերյալ ծրագրի շահառուների և կարևոր դերակատարների կարծիքը և առաջարկություններն ուսումնասիրելու նպատակով իրականացրել է խորին հարցազրույցներ:



**Հետազոտություն՝
«Կրթությունը
քրեակատարողական
հիմնարկներում.
մարտահրավերներ
և հեռանկարներ»**



Շվեդիա
Sverige



ՀՀ Ազատազրկման
համակարգի
կենտրոն

Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. Տեսաֆիլմեր

Բացահայտված հիմնախնդիրները և մշակված առաջարկությունները հանրության լայն շերտերին հասանելի դարձնելու նպատակով Կազմակերպությունը պատրաստել է թեմատիկ տեսաֆիլմեր: Հիմնախնդիրներն առավել առարկայական դարձնելու, հանրությանն իրազեկելու և զգայունությունը բարձրացնելու նպատակով տեսաֆիլմերի համար որպես հերոսներ են ընտրվել ազատազրկված անձինք, որոնք անձնական փորձառության միջոցով ներկայացնում են համակարգային խնդիրները: Ծրագրին ընդհանուր առմամբ մասնակցել է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված 4 անձ, որից 2-ը՝ կին, 1 ցմահ դատապարտյալ, 1 նախկին ցմահ դատապարտյալ: Ըստ անհրաժեշտության՝ նկարահանել է նաև հետևյալ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներին՝ «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ: Հաշվետու տարում

Կազմակերպությունը պատրաստել է 3 տեսաֆիլմ.

- [«Բարձրագույն կրթությունը քրեակատարողական հիմնարկներում»](#)
- [«Հանրակրթությունը ԿՀ-ներում. Արթիկի երեկոյան դպրոց»](#)
- [«Հանրակրթությունը ԶԿՀ-ներում. Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»](#)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պետական կառույցներ

Հաշվետու տարվա հիմնական ձեռքբերումն այն է, որ պետական կառույցները պատրաստակամությամբ համագործակցել են Կազմակերպության հետ: Այդ կառույցների և Կազմակերպության միջև ձևավորվել է կայուն գործընկերություն: Բացի այդ, Կազմակերպությանը վստահում են ազատագրված անձինք և ներկայացնում են իրենց արձանագրած խնդիրները:

☐ ՀՀ արդարադատության նախարարություն

☐ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն և հիմնարկներ

Ծրագրերի մեկնարկից առաջ Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հանդիպել է ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բաղաժանանության մշակման վարչության պետ Արփինե Սարգսյանի հետ, ներկայացրել է ծրագրերը, ակնկալվող ազդեցությունն ու արդյունքները, նախարարության հետ համագործակցության շրջանակները: Ա. Սարգսյանը ողջունել է ծրագրերի իրականացումը՝ նշելով, որ դրանք համահունչ են նախարարության առաջնահերթություններին, քանի որ ազատագրված անձանց վերասոցիալականացումը, նրանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներն ամրագրվել են որպես քեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարելավման ռազմավարական ուղղություններ 2019-2023 թվականների համար: Նա նշել է, որ այս համատեքստում ծրագրերի արդյունքներն ուղղորդող դեր կարող են ունենալ նախարարության համար: Համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ ծրագրերի իրականացման համար Կազմակերպությանը մուտքի թույլտվություն կտրվի քրեակատարողական հիմնարկներ, ինչպես նաև արդարադատության նախարարությունը, քրեակատարողական ծառայությունը և հիմնարկներն ըստ անհրաժեշտության կմասնակցեն Կազմակերպության ծրագրային գործողություններին:

Նշված պայմանավորվածության շրջանակներում Կազմակերպությունը ծրագրերի իրականացման նպատակով մուտքի թույլտվություն է ստացել հետևյալ քրեակատարողական հիմնարկներ՝ «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Գորիս», «Հրազդան», «Սևան» և «Վանաձոր»: Արդարադատության նախարարությունը, քրեակատարողական ծառայություն և հիմնարկներն աջակցել են նաև «Նամակներ բանտից» հոդվածաշարի իրագործմանը: Մասնավորապես, այս հնարավորությունը ներկայացրել են ազատագրված անձանց և հոդվածներն ուղարկել են Կազմակերպությանը:

Կազմակերպության նախաձեռնությամբ «Ազատագրված անձանց խնդիրները՝ հանրային օրակարգում» թեմայով [քննարկում](#) է կազմակերպվել Մեդիա կենտրոնում, որին մասնակցել են Կազմակերպության նախագահ Նարե Զովհաննիսյանը, ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության գլխավոր մասնագետ Նանե Մելքոնյանը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետ Ծովինար Թադևոսյանը, Նույն բաժնի գլխավոր հոգեբան Յոդիկ Ալեքսանյանը և ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայության փորձագետ Ժենյա Իվանյանը:

Քննարկման ընթացքում ներկայացվել է www.prisoninitiatives.am մեդիա հարթակը և ազատագրված անձանց խնդիրները հանրայնացնելու այն ձևաչափը, որն ընտրվել է նախագծի շրջանակում՝ հոդված, ֆիլմ, ֆոտոպատմություն, քննարկվել են այդ խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների որդեգրած քաղաքականությունը, այդ համատեքստում քաղիասարակության հետ համագործակցությունը:



❑ **ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն**

Հաշվետու տարում Կազմակերպության և Պրոբացիայի ծառայության միջև համագործակցության հուշագիր է կնքվել, որի նպատակն է երկուստեք համախմբել ուժերը՝ պրոբացիայի շահառուների համար վերասոցիալականացման ծրագրերի իրականացման, պրոբացիայի ծառայողների մասնագիտական հմտությունների զարգացման և այլ կարևոր գործողությունների ուղղությամբ:

Այդ համագործակցության շրջանակներում արդյունավետ ձևով իրականացվել է «Պրոբացիայի կին շահառուների հզորացում» հանուն կայուն ապագայի» ծրագիրը: Բացի այդ, «Մարդիկ՝ ճաղերից այն կողմ» շարքի տեսաֆիլմերում նկարահանվել են պրոբացիայի 2 շահառու:

Կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվել են հանրային քննարկումներ, որոնց նպատակն էր բարձրաձայնել պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման, նրանց կրթությամբ և աշխատանքով ապահովելու հարցում պրոբացիայի ծառայության առջև ծառացած խնդիրներն ու կարիքները:

Հանրային ռադիոյի «Դպրություն» հաղորդաշարի հերթական [թողարկմանը](#) Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը և ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի պետի տեղակալ Սիրարիկ Մուղդուսյանը քննարկել են պրոբացիայի շահառուների համար իրականացվող կրթական ծրագրերի կարևորությունը:

Հանրային ռադիոյի եթերում «Ի՞նչ անել, եթե...» հարցուպատասխանի ժամանակ Նարե Հովհաննիսյանը պատասխանել է «Ին՞չ անել, եթե պրոբացիայի շահառուները միջին մասնագիտական ստանալ» [հարցին](#): Ն. Հովհաննիսյանի պատասխանը պրոբացիայի շահառուներին կօգնի կողմնորոշվել միջին մասնագիտական կրթություն ստանալու հարցում:

Հանրային ռադիոյի Արմավիրի թղթակիցը [ռադիոյուր](#) է պատրաստել «Պրոբացիայի կին շահառուների հզորացում՝ հանուն կայուն ապագայի» ծրագրի մասին:

Նարե Հովհաննիսյանը հյուրընկալվել է Iammedia-ին: Նա «Պրոբացիայի շահառուների չլուծված խնդիրները» թեմայով [հարցազրույց](#) է տվել, որտեղ խոսել է պրոբացիայի շահառուներին կրթությամբ և աշխատանքով ապահովելու կարևորության մասին:

Կազմակերպության նախաձեռնությամբ թեմայով [քննարկում](#) է կազմակերպվել Մեդիա կենտրոնում, որի ընթացքում Նարե Հովհաննիսյանը և ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայության

Երևանի քաղաքային մարմնի պետի տեղակալ Սիրարփի Մուղդուսյանը քննարկել են մի շարք հարցեր, որոնք վերաբերում են պրոբացիայի շահառուների համար կրթական և մասնագիտական ծրագրերի ապահովմանը, շահառուներին աշխատանքի տեղավորման հարցում աջակցությանը, կին և անչափահաս շահառուների նկատմամբ անհատական մոտեցմանը, մասնագետ աշխատողների համալրմանը, տարբեր պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցությանը և նոր վերասոցիալականացման ծրագրերի ներդրման կարևորությանը:



Պրոբացիայի ծառայությունը պարբերաբար լուսաբանել է Կազմակերպության հետ համագործակցությունը՝ իր ֆեյսբուքյան էջում և կայքում պարբերաբար հրապարակումներ կատարելով «Պրոբացիայի կին շահառուների հզորացում՝ հանուն կայուն ապագայի» դրամաշնորհային ծրագրի [մեկնարկի](#) և [ավարտի](#), համագործակցության հուշագրի [կնքման](#) մասին: Բացի այդ, համագործակցության արդյունքները տեղ են գտել Պրոբացիայի ծառայության կողմից 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ [հաշվետվության](#) մեջ:



Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

Հաշվետու տարում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությունը Կազմակերպությանը հնարավորություն է տվել ընդլայնել գործընկերային ցանցը, համատեղ ջատագովություն իրականացնել, ինչպես նաև ազատագրված անձանց խնդիրները հասանելի դարձնել խոցելի խմբերի իրավունքներով զբաղվող կազմակերպություններին:

... ..

ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ՀԱՄԱԳՈՐԾԱԳՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏՈՐՂՆԵՐԻ ԽՄԲԻ ՀԵՏ



ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



❑ **Քրեակատարողական հիմնարկների դիտորդների խումբ**

Կարևորելով ազատագրված անձանց իրավունքների պաշտպանությունը և քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հանրային վերահսկողությունը՝ Կազմակերպությունը փակ հաստատություններում մշտադիտարկում իրականացնելն ամրագրել է որպես կանոնադրական նպատակ և 2017 թվականից ակտիվորեն ներգրավվել է ՀՀ ԱՆ ԹԿՅ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբում:

2021 թվականի հուլիսին Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը 3 տարի ժամկետով վերընտրվել է որպես Դիտորդների խմբի անդամ: Խմբի այլ անդամների և փորձագետների հետ համատեղ Ն. Հովհաննիսյանը 2021 թվականի ընթացքում 14 այցելություն է կատարել 5 քրեակատարողական հիմնարկ. «Աբովյան» ԹԿՅ՝ 2 այց, «Արմավիր» ԹԿՅ՝ 4 այց, «Դատապարտյալների հիվանդանոց»՝ 1 այց, «Հրազդան» ԹԿՅ՝ 3 այց և «Նուբարաշեն» ԹԿՅ՝ 4 այց: Դրանք կազմել են Դիտորդների խմբի կատարած այցերի 30 տոկոսը:

Նշված այցերի արդյունքում բացահայտված խնդիրների կարգավորման նպատակով Դիտորդների խմբի կողմից ՀՀ արդարադատության նախարարությանն են ներկայացվել 4 ընթացիկ և 1 հրատապ հաշվետվություն, 3 գրություն և 3 հարցում: Ուշագրավ է, որ Էականորեն բարձրացել է Կազմակերպության տեսանելիությունն ազատագրված անձանց շրջանում: Հաշվետու տարում Կազմակերպությունը «Աբովյան», «Արմավիր», «Հրազդան» և «Նուբարաշեն» ԹԿՅ-ներից 11 ահազանգ է ստացել, որոնք վերաբերել են ազատագրված անձանց առողջական վիճակին, քրեական գործի ընթացքի հետ կապված բողոքներին, վարձատրվող աշխատանքներում ներգրավվելուն, պայմանական վաղաժամկետ ազատվելուն, ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխությանը և «Հրազդան» ԹԿՅ-ի փակման հետևանքով առաջացած խնդիրներին: Ահազանգերը քննարկվել են և ըստ անհրաժեշտության ուղղորդվել Դիտորդների խմբին կամ ոլորտի խնդիրներով զբաղվող այլ կազմակերպությունների: Դիտորդների խմբին ուղղորդվել է 5 ահազանգ:

❑ Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կռաւիցիա

Ազատագրկվաԁ անձինք կրկնակի խոցելի խումբ են: Նրանք հասարակության մեջ խտրականության են ենթարկվում այն պատճառով, որ ունեն ազատագրկվաԁ կարգավիճակ: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկներում չեն գործում խտրականության արգելքին ուղղվաԁ հատուկ ընթացակարգեր: Ազատագրկվաԁ անձանց հավասարության և խտրականությունից զերԁ մնալու իրավունքի պաշտպանությունը Կազմակերպության համար օրակարգային է: Այս համատեքստում Կազմակերպությունը կարևորում է խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կռաւիցիայի հետ համագործակցությունը:

Կազմակերպության նախագահ Նարե Զովհաննիսյանը 2018 թվականից Կռաւիցիայում ընդգրկվաԁ է որպես անհատ անդամ: Նա հաշվետու տարում ակտիվորեն մասնակցել է Կռաւիցիայի ընթացիկ գործունեությանը:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

2021 թվականին Էականորեն բարձրացել է Կազմակերպության տեսանելիությունը որպես ազատագրված անձանց խնդիրներով զբաղվող կառույցի: Այս համատեքստում Կազմակերպությունը տեղական և միջազգային կառույցների կողմից հրավերներ է ստացել մասնակցելու մի շարք կարևոր միջոցառումների և քննարկումների, որտեղ բարձրաձայնել է քրեակատարողական ոլորտին առնչվող տարաբնույթ հարցեր:

Միջազգային կառույցներ

Հայաստանում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի գրասենյակների, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ստացված հրավերների շրջանակում Կազմակերպությունը մասնակցել է հետևյալ քննարկումներին.

- «Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմելու ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ կլոր-սեղան քննարկում,
- «Կարծրատիպերի դեմ պայքարի արդյունավետ միջոցները (ներառյալ ԼԳԲՏ անձանց վերաբերյալ կարծրատիպերը)» թեմայով քննարկում, որտեղ ներկայացրել է ազատագրված ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի փորձը,
- Ատելության խոսքի կարգավորումների քարտեզագրման, ատելության խոսքի հիմնախնդրի հետ կապված ներկայիս իրավիճակի և դրա կարգավորումների վերաբերյալ խմբային հարցազրույց և աշխատարան, որտեղ ներկայացրել է քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի դրսևորումները և օրենսդրական բացերը,
- Ատելության հողի վրա կատարվող հանցագործությունները ճանաչելու և դրանք հետաքննելու կարողությունների զարգացմանն ուղղված առցանց սեմինար:

Բացի այդ, Կազմակերպությունն իր ջանքերն է ներդրել Հայաստանում ազատագրված անձանց իրավունքների պաշտպանության, իրավահավասարության և վերասոցիալականացման ուղղությամբ: Այս համատեքստում համագործակցել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ, որպեսզի ազատագրված անձանց իրավունքների խախտումների դեպքերը և դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունները ներառվեն ԱՄՆ պետքարտուղարության՝ մարդու իրավունքների վերաբերյալ 2021 թվականի զեկույցում:

Պետական կառույցներ

ՀՀ արդարադատության նախարարության նախարարության կողմից ստացված հրավերների շրջանակում Կազմակերպությունը մասնակցել է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների քառամյա ռազմավարության կատարողականի քննարկմանը՝ ներկայացնելով նշված ռազմավարության իրականացման շրջանակներում Կազմակերպության արձանագրած խնդիրները:

Կազմակերպությունը մասնակցել է նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի և Քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի քննարկումներին՝ ներկայացնելով նշված նախագծերի վերաբերյալ Կազմակերպության կողմից վերհանված խնդրահարույց հարցերը, առաջարկությունները և դիտարկումները:

Կազմակերպությունը մասնակցել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կազմակերպած «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովումն ազատությունից զրկման վայրերում» խորագրով կլոր սեղան-քննարկմանը և ներկայացրել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց իրավունքներին, առողջապահական ծառայություններին հասանելիությանը և խնամքի կազմակերպմանն առնչվող խնդիրները:





Քաղաքացիական հասարակության կառույցներ

- Կազմակերպությունը մասնակցել է քրեակատարողական հիմնարկներում Կովիդ-19 համավարակի զարգացման մոդելավորման և կանխատեսման վերաբերյալ հետազոտության քննարկմանը, որն իրականացրել է Դիտորդների խումբը:
- Կազմակերպությունը մասնակցել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կազմակերպած «Հայաստանը մարտահրավերների կիզակետում» թեմայով կոնֆերանսին, որտեղ ներկայացրել է Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱԿ ծառայությունների հասանելիությանն առնչվող խնդիրները՝ շեշտելով մասնավորապես խոցելի խմբերի շրջանում ՄԻԱԿ-ի տարածման ռիսկերը կանխարգելելու կարևորությունը:



- Կազմակերպությունը մասնակցել է Եվրասիա համագործակցության հիմնադրամի կազմակերպած «Քրեական ենթամշակույթը Հայաստանում» թեմայով ֆենարկմանը, որտեղ ներկայացրել է բանտերում քրեական ենթամշակույթի դեմ պայքարը քրեաիրավական տիրույթում ծավալելու խնդիրները:
- Կազմակերպությունը մասնակցել է գործընկեր կազմակերպությունների՝ Հայաստանում կանանց հիմնադրամի և Եվրասիա համագործակցության հիմնադրամի կազմակերպած միջոցառումներին և դասընթացներին, որոնք ուղղված էին դրամաշնորհառուների միջև հաղորդակցության խթանմանը և ցանցային համագործակցության ստեղծմանը:

Կրթական հաստատություններ

Կազմակերպությունը «Քրեակատարողական ընթացակարգի կատարելագործման հիմնախնդիրներ» առարկայի շրջանակներում հյուրընկալվել է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի «Քրեական արդարադատություն և փաստաբանություն» մագիստրոսական ծրագրի ուսանողներին և ներկայացրել է քրեակատարողական համակարգի առկա խնդիրները և բարելավման ռազմավարությունները:



Լրատվամիջոցներ

Հաշվետու տարում Կազմակերպության՝ որպես ազատագրկված անձանց խնդիրներով զբաղվող կառույցի տեսանելիությունը բարձրացել է նաև մեդիա դաշտում: Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հրավիրվել է մասնակցելու մի շարք հաղորդումների, հարցազրույցների և քննարկումների: Կազմակերպության գործունեությունը, ինչպես նաև քրեակատարողական համակարգի վերաբերյալ վերջինիս արձանագրած խնդիրները լուսաբանել են մի շարք լրատվամիջոցներ:

Հանրային ռադիո

**«Դպրություն»
հաղորդաշար**

Ինչպե՞ս կանխել
կրկնահանգագործությունը

«Ի՞նչ անել, եթե...»

«Ի՞նչ» անել, եթե ԶԿՀ-ում
խախտվում են
ազատագրկվածների
իրավունքները»

«Ի՞նչ» անել, եթե պրոբացիայի
շահառուները միջին
մասնագիտական կրթություն
են ցանկանում ստանալ»

Ռադիոլուր

Պրոբացիայի կին շահառուները
վարսահարդարում ու
մատնահարդարում են սովորում

Աշխատանքը՝ այլընտրանք
բանտին

Մարդկային պատմություններ՝
ճաղերից այն կողմ

Քո ձայնը

Ազատագրկված անձանց
խնդիրները

Որոշ քրեակատարողական
հիմնարկներ փակվում են

Սիվիլներ

[«Բարեփոխվում է արդյոք
կալանավորների կյանքը»](#)

Ալիք մեդիա

[«Կրթությունը նաև
ազատագրկվածների
իրավունքն է»](#)

Առավոտ

[«Ազատագրկված անձինք
ուրախանում են, ասում
ինչ լավ է գրուցեցինք,
թեթևացանք»](#)

Առաջին ալիք

Լուրեր

[Պրոքացիայի
ծառայության խնդիրները](#)

**Ճիշտ ժամանակին
[Բանտերը փակվում են](#)**

I am media

[Պրոքացիայի շահառուների
չուծված խնդիրները](#)

[«Կոշ» և «Հրազդան» ԶԿՀ-ների
աշխատանքը դադարում է](#)

«Իրավական Նախաձեռնությունների կենտրոն»
իրավապաշտպան հասարակական կազմակերպություն



+374 55 155 300



info@prisoninitiatives.am



www.prisoninitiatives.am



<https://www.facebook.com/legalinitiativesngo/>



https://www.youtube.com/channel/UCezj-uY_unu1qjan-307xkw



https://twitter.com/@initiatives_ngo



<https://t.me/legalinitiatives>